ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԹԷՈԴՈՍԻԱ-ԿԱՖԱ ՔԱՂԱՔԻՆ ՏԱՒՐԻՈՅ

ԵՒ ԱԶԳԻՍ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Գրոցս առաջին մասին մէջ խօսելով, փոքր ի շատէ, Անեցի Հայոց դէպ 'ի Ռուսաստան գաղթելուն մասին, մասնաւորապէս ի Նոր-Նախիջեւան, անհրաժեշտ հարկ մի էր մեզ, խօսիլ նաև, ի Տաւրիա կամ ի Ղրիմ, և առանձինն ի Թէոդոսիա գաղթող ազգայնոց մասին. վասն զի այս քաղաքը, իւր աշխարհագրական դրիւք և շահաւանաւութեան յարմար ծովածոցով, սիրելավայր և կեդրոնատեղի եղած է Հայ գաղթականաց համար. և արդէն ի Կամենից և ի Նոր Նախիջեւան գաղթող հայկազունք աստի ի Թէոդոսիոյ շուել գնացել են այն աշխարհները[1]:

1. ի Կամենից 1351 ին, Նախիջեւան 1778 ին: